

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-112
«02» ՕԳՈՍՏՈՍԻ 2019 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ, ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ
Կից ներկայացնում ենք Ձեզ Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի
օգոստոս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և հայտնում այն մասին, որ սույն ամսվա
ընթացքում արձակած կարգադրություններ չկան:

Առդիր 4 թերթ:

Համայնքի ղեկավար



Մ. Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24-Ա

«16» ՕԳՈՍՏՈՍԻ 2019 Թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում գտնվող 04-008-0029-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին տալ թիվ 2 փողոցի 2 հասցե համարանիշը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային անշարժ գույքի կադաստր պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Մ. Բաբայան

2019 թվականի օգոստոսի 16

Գ. Ամբերդ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ն**

«19» ՕԳՈՍՏՈՍԻ 2019 թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի ավագանու թիվ 8 նիստի N 29-Ն որոշման 8 և 9 կետերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի 2019 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը: Ամբերդի համայնքապետարանի 08.01.01 սպորտ ծառայություն ծրագրի 4261 հոդվածից պակասեցնել 300.0 հազար դրամ
08.02.04 այլ մշակութային կազմակերպություն ծրագրի 4239 հոդվածին ավելացնել 300.0 հազար դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար

Մ. Բարսյան



2019 թվականի օգոստոսի 19

Գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26-Ն

«26» ՕԳՈՍՏՈՍԻ 2019 թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի ավագանու թիվ 8 նիստի N 29-Ն որոշման 8 և 9 կետերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի 2019 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունը: Ամբերդի համայնքապետարանի 08.02.04 այլ մշակույթահին ծառայություններ ծրագրի 4237 հոդվածից պակասեցնել 230.0 հազար դրամ
01.01.04 համայնքապետարանի ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրի 4235 հոդվածին ավելացնել 80.0 հազար դրամ
4239 հոդվածին ավելացնել 150.0 հազար դրամ
2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



Համայնքի ղեկավար

Ս. Բաբայան

2019 թվականի օգոստոսի 26

Գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27-Ա

Գ. ԱՄԲԵՐԴ

«29» ՕԳՈՍՏՈՍԻ 2019Թ.

ԳԱՐԻԿ ՎԱՀՐԱՄԻ ԹԱՌՓՈՇՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Կոմիտասի փողոցի 17 տան բնակիչ՝ Մայրանուշ Վրեժի Թովմասյանը դիմել է իր 1-ին կարգի հաշմանդամ տղայի՝ Գարիկ Վահրամի Թառփոռյանի /ծնվ. 28.08.2001թ./ նկատմամբ հոգաբարձու սահմանելու մասին:

Գործում կան անհրաժեշտ փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով հիվանդ տղայի շահերը, հիմք ընդունելով համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 2-ի թիվ 2 նիստի արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134 և 135-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35 և 37-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Կոմիտասի փողոցի 17 տան բնակիչ՝ Մայրանուշ Վրեժի Թովմասյանին նշանակել իր 1-ին կարգի հաշմանդամ տղայի՝ Գարիկ Վահրամի Թառփոռյանի /ծնվ. 28.08.2001թ./ նկատմամբ հոգաբարձու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



Մ. Բաբայան

2019 թվականի օգոստոսի 29

Գ. Ամբերդ